# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2017թ. հոկտեմբերի 18-20-ը

## Չեռնոգորիա (Սվետի Ստեֆան) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը**

Գարեգին Մելքոնյան

**2. Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները**

Չեռնոգորիա (Սվետի Ստեֆան), 2017թ. հոկտեմբերի 18-20-ը

**4. Հրավիրող կողմը**

«Arton Capital» կազմակերպություն

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն «Համաշխարհային քաղաքացի. Հնարավորությունները անորոշության դարաշրջանում» համաժողովին

**6. Քննարկված թեմաները**

Համաժողովի ընթացքում քննարկվել են տարբեր երկրներում որոշակի գումարի դիմաց քաղաքացիություն ստանալու ծրագրերի առանձնահատկությունները, ընթացքը, դրանց կապը գլոբալ միգրացիոն միտումների, նորարարության խթանման, ինչպես նաև ՄԱԿ կայուն զարգացման նպատակների հետ:

«Arton Capital» ընկերության հիմնադիր Արմանդ Արտոնի հետ քննարկվել են Հայաստանի հետ ընթացող աշխատանքների ներկա իրավիճակը՝ որոշակի գումարից ավելի ներդրում կատարած օտարերկրացիներին քաղաքացիություն շնորհելու մեխանիզմի ստեղծման և այս հարցում միջազգային հաջող փորձի կիրարկման ուղղությամբ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են տարբեր երկրներում առկա մեխանիզմները ներդրումների ներգրավման ուղղությամբ:

**7. Հանդիպումները, ելույթները, քննարկված հարցերը**

Համաժողովում ելույթ եմ ունեցել «Ներդրումներ փոփոխությունների բերող ազդեցության և ՊՄԳ համար» խորագրով պլենար նիստի ընթացքում: Ներկայացվել է ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունները, նոր օրենսդրական նախաձեռնությունները, ներդրողներին առաջարկվող արտոնությունների համակարգը և ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանում որոշակի գումարի դիմաց քաղաքացիություն ստանալու գաղափարի հնարավոր կիրառումը:

Համաժողովի ընթացքում ոչ պաշտոնական հանդիպումներ ենք ունեցել մի շարք երկրների պատվիրակությունների հետ, դիտարկվել է վերջինների փորձն այս հարցում:

Միջոցառման ընթացքում հանդիպում ենք ունեցել «Arton Capital» ընկերության հիմնադիր Արմանդ Արտոնի հետ, քննարկվել են համագործակցության հետագա հնարավորությունները:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես են եկել Չեռնոգորիայի և մի շարք այլ երկրների վարչապետներ, փոխվարչապետներ, հասարակական և քաղաքական գործիչներ:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում որոշումներ չեն ընդունվել:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Arton Capital» ընկերության հետ շարունակել Հայաստանում որոշակի գումարի դիմաց քաղաքացիություն ստանալու մեխանիզմի մշակման աշխատանքները: Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել աջակցելու այդ աշխատանքներին:

**9. Գործուղվողը՝**

Գարեգին Մելքոնյան

**10. Ստորագրությունը, ամսաթիվը՝**

07.11.2017թ.